ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 օգոստոս 2020 թվականի N 281- Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2019 թվականի դեկտեմբերի 10-ի N 488-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2020 թվականի օգոստոսի 11-ին ներկայացված N 17 արձանագրությունը

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից 30 /երեսուն/ քաղաքացիների սոցիալական աջակցության նպատակով հատկացնել միանվագ դրամական օգնություն ընդհանուր 3 297 000 /երեք միլիոն երկու հարյուր իննսունյոթ հազար/ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ անկանխիկ, բանկային համակարգի միջոցով ապահովել գումարների վճարումը:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ՉՈԲԱՆՅԱՆ

2020թ. օգոստոսի 11
ք.Իջևան